



Է. ԿԻՐԱԿԻ ՅԻՆԱՆՑ : ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ



ԺԱՄԱՄՈՒՏ

Դուս, որ աննկարագրելի գահի վրայ կը նստիս եւ հոգեղէն էակներէն օրհնութիւններ կը ստանաս, Աստուած եւ անըմբռնելի Բա՛ն: Երկրի վրայ երեւցար իբր ճշմարիտ մա՛րդ: Աստուածային տնօրհնումի խորհուրդը գործադրեցիր՝ խաչի եւ մահուան համբերելով եւ հրաշալի յարութիւնդ իրագործեցիր գերազանց գօրութեամբ: Այսօր երկինք կը համբառնաս փառքով եւ կուսածին մարմինդ հրաշալի փառքիդ լոյսովը կը գարդարես: Այդ տեսնելով՝ Եսային մարգարեաբար կ'ըսեր.

- «Ո՞վ է այս որ երկրէն բարձրանալով կու գայ»: Իսկ երկնային զօրքերը, իհացած կը գոչէին իրարու.

- «Իշխաններ, ձեր դռները բարձրացուցեք, որպէսզի մտնէ փառքի թագաւորը»: Բայց դուս, ՏԷ՛ր, որ ամենակարող ես ու ամենագօր, շնորհէ՛ մեզի որ քեզի հանդիպինք, ամպերէն վեր՝ քու յաջորդ գալստեանդ օրը, դուս որ միակ մարդասերն ես:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԲՁ.

Որ համբարձար այսօր աստուածային իշխանութեամբ դեպի հայրական կառքը, սպասաւորուելով դասերու կողմէ, որոնք կ'երգէին ըսելով. բարձրացուցէք, իշխաններ, ձեր դռները դեպի վեր եւ պիտի մտնէ Թագաւորը փառքի:

Հիացան վերին իշխանութիւնները եւ սոսկալի ձայնով կը դիմէին իրարու. Ո՞վ է այս փառքի թագաւորը, որ կու գայ մարմնով եւ սքանչելի զօրութեամբ. բարձրացուցէք, իշխաններ, ձեր դռները դեպի վեր եւ պիտի մտնէ Թագաւորը փառքի:

Կ'եղանակէին վերին իշխանութիւնները, հրաշալի ձայնով նոր երգ կ'երգէին ըսելով. Սա Ինքը փառքի Թագաւորն է Փրկիչը աշխարհի եւ ազատողը մարդկային ցեղին. բարձրացուցէք, իշխաններ, ձեր դռները դեպի վեր, եւ պիտի մտնէ Թագաւորը փառքի:

ՄԵՍԵՂԻ (117, 118, 119,1)

Երանի՛ անոնց, որոնք Տիրոջ երկիւղն ունին իրենց սրտին մէջ եւ Ասոր ճամբայէն կը քալեն:

Մանկութենէս ի վեր, շատ անգամ պայքարած եմ ինծի դէմ, այսպէս պիտի ըսէ անշուշտ Իսրայէլ:

Տէ՛ր, անդունդներու խորերէն քեզի կը գոչեմ, կանչս դուն լսէ՛, Տէր:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ

ՊՕՂՈՍԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Առաքեալներուն Գործերէն է այս ընթերցուածը:

(Գործք Առք. 24, 1-23)

Այն առէն երբ Փելիքս դատաւորը նշան ըրաւ որ խօսի՝ Պօղոս պատասխանեց. «Գիտեմ, թէ շատ տարիներէ ի վեր, դուն այս ազգին դատաւորն ես, հետեւաբար վստահութեամբ կը պաշտպանեմ իմ դատս: Կրնաս ստուգել, թէ ոչ աւելի քան տասներկու օր առաջ Երուսաղէմ ելայ պաշտամունքս ընելու, եւ ո՛չ Տաճարին, ո՛չ Ժողովարաններուն եւ ո՛չ ալ քաղաքին մէջ տեսան զիս, որ մէկու մը հետ կը վիճէի կամ բազմութեան մէջ խռովութիւն կը յարուցանէի: Ոչ իսկ կըրնան ապացուցանել այդ բոլոր ամբաստանութիւնները, զորս վրաս կը դնեն: Կը խոստովանիմ սակայն, թէ հետեւելով ճանապարհին, զոր ասոնք աղանդ կը կոչեն, ես կը ծառայեմ հայրերուս Աստուծոյն, կը հաւատամ ամեն բանի, որ գրուած է Օրէնքին եւ Մարգարէներուն մէջ, յոյսս կը դնեմ Աստուծոյ վրայ, ինչպէս կ'ակընկալեն ասոնք, թէ օր մը արդարներն ու մեղաւորները յարութիւն



պիտի առնեն: Ասոր համար անդադար կը ճգնիմ մաքուր խիղճ մը ունենալ՝ Աստուծոյ եւ մարդոց առջեւ»:

«Շատ տարիներ ետք, վերադարձայ

օգնութիւն բերելու իմ ժողովուրդիս եւ ընծաներ մատուցանելու: Ճիշդ այն ատեն երբ կը մասնակցէի մաքրութեան արարողութիւններուն, հրեաները գտան զիս Տաճարին մէջ, ուր սակայն չկար ո՛չ բազմութիւն եւ ո՛չ ալ խռովութիւն ժողովուրդին մէջ: Կային միայն մի քանի հրեաներ, որոնք եկած էին Ասիայէն: Ասո՛նք պէտք է ներկայանան քեզի, ամբաստանելու համար զիս, եթէ մեղադրանք մը ունին ինձի հակառակ: Կամ ասոնք, որոնք հիմա հոս ներկայ են, թող ըսեն, եթէ իմ վրաս յանցանք մը գտան, երբ

կանչուեցայ հրեաներու Ատեանին առջեւ, այլ միայն այս խօսքիս համար, զոր բարձրաձայն աղաղակեցի, երբ կանգնած էի անոնց մէջ. 'Դուք այսօր կը դատէք զիս, որովհետեւ ես կը հաւատամ մեռելներու յարութեան': Փելիքս, որ շատ լաւ տեղեակ էր ճանապարհի մասին, արձակեց զանոնք ըսելով. «Երբ Լիւսիաս հազարապետը գայ՝ կը վճռեմ ձեր դատին մասին»: Հրամայեց հարիւրապետին պահել Պօղոսը, դիւրութիւններ տալ եւ արգելք չդնել որ իրենները գան եւ օգնեն իրեն:

Ալէլուիա, Ալէլուիա,

Ո՛վ իշխաններ, լայն բացէք ձեր դռները: Վեր թո՛ղ բարձրանան յաւիտենականութեան դռները, եւ ներս թող մտնէ թագաւորը: :

(Սղ. 23, 9)

Ալէլուիա:

**ԱՒԵՏԱՐԱՆ
ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱԴՆԵՄ ԿԸ ՄՏՆԷ
(Յովհ. 12, 12-23)**

Մեր Տեր Յիսուս Քրիստոսի Գալըստեան մասին:

Յաջորդ օրը, տօնի համար եկած ժողովուրդը, երբ իմացաւ, թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմաւենիի ոստեր առին եւ գացին զինք դիմաւորելու եւ կ'աղաղակէին. Ովսաննա՛, Օրինեալ ըլլայ ան, որ կու գայ Տիրոջ անունով, եւ Իսրայէլի թագաւորը: Յիսուս էշ մը գտաւ եւ վրան հեծաւ, Սուրբ Գիրքին խօսքին համաձայն. «Մի՛ վախնար, դուստր Սիոնի, ահաւասիկ կու գայ թագաւորդ խոնարի եւ հեծած իշու աւանակի վրայ»:

Աշակերտները այն ատեն չհասկցան ասիկա, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ, այն ատեն յիշեցին, թէ ըրեր էին Յիսուսի՝ ինչ որ գրուած է անոր մասին Ս. Գիրքին մէջ: Բազմութիւնը, որ հետն էր, երբ Ղազարը գերեզմանէն դուրս կանչեց եւ անոր յարութիւն տուաւ մեռելներէն, կը վկայէր Յիսուսի: Եւ ասոր համար ժողովուրդը դիմաւորեց զինք, որովհետեւ լսած էին, թէ այս հրաշքը ըրած էր: Իսկ փարիսեցիները կ'ըսէին իրարու. «Կը տեսնե՞ք, թէ դուք ոչինչ կը



շահիք. ահաւասիկ ամբողջ աշխարհը անոր ետեւէն գնաց»:

Մէկ քանի հեթանոսներ Տօնի առթիւ եկած էին երկրպագութիւն ընելու: Դիմեցին Փիլիպպոսի, որ Գալիլիոյ Բեթսայիդայէն էր եւ անոր այս խնդրանքն ըրին. «Տէ՛ր, կը փափաքինք Յիսուսը տեսնել»:

Փիլիպպոս Անդրեասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի իմացուցին: Յիսուս պատասխանեց. «Հասաւ ժամը եւ Մարդու Որդին պիտի փառաւորուի»:

**Երկրորդ Ծաղկազարդ
Ուխտագնացութիւն ի վանս Զմմառու - Է. Կիրակի Յիսանց**

Համբարձման յաջորդող Ս. Չատկի եօթներորդ Կիրակին կը կոչուի Երկրորդ Ծաղկազարդ: Յիսուսի Երուսաղէմ մուտքը ներկայացնող Աւետարանական ընթերցումը այդ օրուան կը գուգադիպի, ուր Ծաղկազարդի յիշատակութեան կրկնութիւնը տեղի կ'ունենայ:

Այս տարի՝ Զմմառու վանքի Յաւագին Տիրամօր ուխտի օրը կը գուգադիպի Կրկնագատկին: Հակառակ տարիներու անխուսափելի մաշեցումին, փոթորկալից շրջաններուն, կայծակներու շառաչիւն հարուածներուն, Զմմառու վանքը կանգուն է, որովհետեւ կը վայելէ Աստուածամօր մայրական գուրգուրանքն ու սերը: Ան արժանաւոր սրբավայրն է Զմմառու Տիրամօր պատկերին, որ ինքնին հրաշալիք մըն է եւ հրաշագործ նուէր մը՝ Յռոմի Բենեդիկտոս ԺԴ. Բահանայապետէն, ընծայուած վանքիս հիմնադիր եւ Հայ Կաթողիկէ Նուիրապետութեան վերանորոգիչ՝ Աբրահամ Արծիւեան Կաթողիկոսին, երբ ան Յռոմ կը գտնուէր իր Հայրապետութեան վաւերացումը ընդունելու համար, 1742-ին:

Ամէն տարի Մայիս ամսուայ վերջին Կիրակին, Լիբանանի Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւններէն հայ ուխտաւորներ կ'ուղղուին դէպի Զմմառու Տիրամօր վանքը, առաջնորդութեամբ Ամենապատիւ Յոգեւոր Տիրոջ եւ կղերական դասուն, իրենց յարգանքն ու սերը մատուցանելու Ս. Աստուածածնին: Անտարակոյս մեծապէս գովելի եւ սիրոյ արտայայտութիւն է պատուել, մեծարել որդիաբար Ս. Տիրամօր պատկերը, որ դարերով սերունդներուն պաշտամունքին առարկայ եղած է եւ որուն միջոցաւ Անարատ Կոյսը սփռած է անթիւ հոգեւոր եւ մարմնաւոր բա-



րիքներ: Սակայն ասիկա միայն չի՛ բաւեր, այլ հա՛րկ է որ նմանութեամբ իր չքնաղ առաքինութիւններուն՝ մէ՛նք եւս դառնանք իր կենդանի պատկերները:

Թող կրկին ցուան, իրենց բովանդակ ու յանկուցիչ փայլով մեր մտքին ու սրտին առջեւ, Ամենասուրբ Տիրամօր հաւատքը անվկանդ, յոյսը անդէդէւ, սերը հրատոյչոր առ Աստուած, առ իր Միածին Որդին եւ առ մարդիկ: Թող փայլի անոր խոնարհութիւնը անգերագանց, հնազանդութիւնը կատարեալ, աղօթասիրութիւնը՝ անմռունչ, համբերութիւնը անտրտունջ, սրբութիւնը դիւցազնական, մաքրութիւնը շուշանափայլ:

Թող ցոլայ Անարատ Յոգեւալ Կոյսին յաւերժական հակառակութիւնն ու խորշանքը՝ մեղքի դէմ, մեղքին ստուերին դէմ անգամ, որ մեծագոյն չարիքը, միակ չարիքը եւ գլխաւոր պատճառն է բոլոր աղէտներուն եւ թշուառութեանց:

Երբ այս ու բոլոր միւս երկնաբոյր առաքինութիւնները Անոր, որ կոչուած է շուշան հովտաց, ծաղիկը դաշտաց, փթթին մեր հոգիներուն մէջ, մենք ալ նոր կեանքով պիտի խայտանք եւ պիտի ունենանք Տիրամօր հանդէպ մեր սիրոյն հարազատութեան լաւագոյն գրաւականը: